

9(47.925)

7-35

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ-  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ  
ԳԻՏԱԿԱՆ  
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ  
ՏԱՐԱԾՄԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ

ՀԱՅ ԵՎ ՎՐԱՑ  
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ  
ԴԱՐԱՎՈՐ  
ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ

9(47.925)

Պ-35

Վ. Ա. ՊԱՐՍԱՄՅԱՆ

Հ Ա Յ Ե Վ Վ Ր Ա Ց Ժ Ո Ղ Ո Վ Ո Ի Ր Դ Ե Ն Ե Ր Ի Դ Ա Ր Ա Վ Ո Ր  
Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ո Թ Յ Ո Ի Ն Ը

59



## ՀԱՅ ԵՎ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՐԱՎՈՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ \*

Կովկասյան ժողովուրդների ծագման մասին գոյություն ունի մի հրաշալի ավանդություն, որի համաձայն նրանք առաջացել են մի ընդհանուր նախահորից: Հայերի նախահայր Հայկը, վրացիներինը՝ Քարթլոսը և մյուսները, ըստ այդ ավանդության, եղել են հարազատ հղբայրներ:

Հայ և վրաց ժողովուրդների կապերը սկիզբ են առել դարերի խորքից: Մոտ երեք հազար տարվա պատմություն ունեն դրանք: Հայերի ու վրացիների աշխարհագրական միջավայրը, տնտեսական, քաղաքական և կուլտուրական սերտ կապերը, օտար նվաճողների դեմ մղած համատեղ պայքարը և առհասարակ նրանց պատմական բախտի ընդհանրությունները կրուել ու կոփել են այդ երկու հինավուրց դրացիների բարեկամությունը:

Հազարամյակներ են անցել Հայաստանի ու Վրաստանի վրայով: Հայերն ու վրացիները բազմիցս ենթարկվել են Արևելքի և Արևմուտքի նվաճողների ավերիչ արշավանքներին: Պարսիկները, հռոմեացիները, բյուզանդացիները, արաբները, մոնղոլները, սելջուկները, թուրքերը, գերմանական, անգլիական ու ամերիկյան իմպերիալիստները քանի-քանի անգամ փորձել են զավթել Հայաստանն ու Վրաստանը: Բայց ազատասեր վրացիք ու հայերը միշտ էլ ձեռք-ձեռքի տված կենաց և

---

\* Սովետական Վրաստանի 40-ամյակի առթիվ Նրեանում կարգացած հրապարակային դասախոսություն:

մահու կոիվ են մղել օտարերկրյա զավթիչների դեմ, պաշտպանել են իրենց հայրենիքը, իրենց պատիվը:

Հին ու նոր ժամանակների նվաճողներից և ոչ մեկին երբեք չի հաջողվել պառակտել հայ-վրացական եղբայրությունը: Վրաստանն ու Հայաստանը իրենց բարձր ու սեգ սարերի պես միշտ մնացել են կանգուն: Հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը դնալով ավելի ու ավելի է ամրապնդվել և անխոցելի դարձել:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը շատ հարուստ և ուսանելի պատմություն ունի: Հասկանալի է, որ անհնարին է այդ ընդգրկել մի զեկուցման մեջ: Ուստի ես կանգ կառնեմ հիմնական և առավել կարևոր մոմենտների վրա:

Հայտնի է, որ մեր էրայից դեռ շատ առաջ հայկական և վրացական ցեղախմբերը ապրել են կողք-կողքի, ձևավորվել որպես ինքնուրույն ժողովուրդներ (ազգեր), ստեղծել իրենց պետությունը, իրենց հնագույն կուլտուրան, իրենց մայրենի լեզուն, մեկը մյուսին թիկունք եղել արտաքին թշնամիների դեմ:

Պատմական փաստերը վկայում են, որ հայ-վրացական պինված ուժերը երկարատև ու համառ մարտեր են մղել հատկապես հռոմեական զավթիչների դեմ, որոնք մեծ վտանգ էին սպառնում ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի անկախությանը: 68 թվականին (մ. թ. ա.) երբ հռոմեական լեգեոնները ներխուժում են Հայաստան և հարձակվում Արտաշատի վրա, Տիգրան II-ի զորքերի հետ միացած, հռոմեական զավթիչների դեմ քաջությունով կռվում էին նաև վրացական (իբերական) նիզակակիրները: 66—65 թթ. հռոմեական զորքերը Պոմպեոսի հրամանատարությամբ նոր արշավանք են կատարում Անդրկովկասի վրա: Հայերը, վրացիները, աղվանները միացյալ ուժերով քաջաբար կռվում են ընդհանուր թըշնամու դեմ, պաշտպանում հայրենի հողերը:

IV—V դարերում Անդրկովկասում ուժեղանում է Սասանյան Պարսկաստանի ագրեսիան: Պարսկաստանը ձգտում էր ոչ միայն նվաճել Հայաստանը, Վրաստանը ու Աղվանքը, այլև

հավատափոխ անել, ասիմիլյացիայի ենթարկել Անդրկովկասի ժողովուրդներին:

Պարսկական զավթիչների այդօրինակ կործանարար քաղաքականության դեմ կենաց և մահու կռիվ են դուրս գալիս հայերը, վրացիք, աղվանները: Նրանք միահամուռ ուժերով դիմադրում են թշնամուն և, ճիշտ է, ծանր կորուստների գնով, կարողանում են պահպանել իրենց գոյությունը, լեզուն, կրոնը, ազգային ինքնուրույնությունը: 451 թ. մայիսի 26-ի Ավարայրի ճակատամարտում փաստորեն վճռվում էր ոչ միայն հայերի, այլև վրացիների ու աղվանների բախտը: Ավարայրի հերոսական ճակատամարտը համակովկասյան նշանակություն ունեցող ճակատամարտ էր:

VII—IX դարերում Հայաստանը և ողջ Անդրկովկասը դառնում է արաբական խալիֆայի նվաճումների ու կողոպուտի ասպարեզ: Արաբական արշավանքների առաջին զոհը Հայաստանն էր: 640 թվականին արաբական զորքերը մտնում են Հայաստան: 642 թվականին նրանք գրավում և ավերում են Դվինը: VIII դարի պատմիչ Ղևոնդը նկարագրելով այդ անցքերը, գրում է. «Հասան քաղաքին (Դվին) և անմիջապես գրավեցին ամրոցը և կոտորեցին այնտեղ գտնվող մարդկանց, գերի վերցրին 35 հազար կանանց և երեխաների: Արդ, ով կարող է արժանավորապես ողբալ աղետների թշվառությունը, քանի որ ամեն կողմից վտանգը մեծ էր»:

Արաբական արշավանքների վտանգը մեծ էր ոչ միայն հայերի, այլև հարևան ու բախտակից վրացիների և աղվանների համար: VIII—IX դարերում ամբողջ Անդրկովկասում ավելի է ծանրանում արաբական խալիֆայի լուծը: Արաբ զորավարներ Մրվանի և Բուղայի ասպատակություններն ու կողոպուտները անտանելի ծանր դրություն էին ստեղծել Անդրկովկասի ժողովուրդների համար: Ինչպես Ղևոնդ պատմիչն է վկայում՝ «ամենքը հառաչում էին անհանգստությունից ու նեղությունից, տեսակ-տեսակ չարիքներից ու վտանգներից»: «Հայոց 176 (727) թվականի վերջերին,— գրում է Ստ. Օրբելյանը,— բազմաթիվ զորքով Հայաստան եկավ աշխարհավեր

Մրվանք և սաստիկ կրակի նման այրեց ու հրդեհեց մեր աշխարհի գեղեցկությունը:

VIII դարի վրաց հեղինակ Իսանե Սաբանիսձենն նկարագրելով արաբական ճշումները ասում է, որ վրացիներն արաբների լծի տակ տառապում են կարիքի, աղքատության և հարկերի ծանրության կապանքներում:

Տնտեսական և քաղաքական ծանր վիճակը Անդրկովկասի ժողովուրդներին ազատագրական պայքարի էր մղում արաբական լծի դեմ: 748—750, 762, 774—775, 850—852 թվականներին Հայաստանում ժողովրդական ապստամբություններ են բռնկվում արաբների դեմ, որոնք լայն արձագանք են գտնում ամբողջ Անդրկովկասում: Հայ հայրենասերները քաջարի հրամանատարներ Մուշեղ Մամիկոնյանի, Սմբատ Սպարապետի, Թեոդորոս Ռշտունու և ուրիշների գլխավորությամբ հերոսական կռիվներ են մղում օտարերկրյա հարստահարիչների դեմ: Կարինում, Վասպուրականում, Բագավանի ու Արծնի մոտ, Սասունում և այլուր հայ ժողովրդի լայն զանգվածները արիարար դիմադրում էին արաբական զավթիչներին: «Մենք չենք կարող տանել այն թշվառությունները, որոնց մեջ գտնվում է մեր երկիրը»: «Քաջությամբ մենքնեմք մեր հայրենիքի ու մեր ժողովրդի համար»—ասում էին ապստամբները:

850—852 թվականների Սասունի ապստամբությունը, որը հիմք է հանդիսացել մեր «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի համար, ջերմ պաշտպանություն է գտնում արաբական լծի տակ հեծող մյուս ժողովուրդների կողմից: Տեղեկություններ կան, որ Բուղայի արշավանքի ժամանակ Թբիլիսիի պաշտպանության համար մղված մարտերին ակտիվ մասնակցություն են ունեցել նաև խուֆեցի հայերը:

Ժողովրդական ապստամբությունները արաբական զավթիչների դեմ լայն ժավալ են ստանում նաև Վրաստանում ու Ատրպատականում: Ապստամբները Ատրպատականում և Սյունիքում Բաբեկի գլխավորությամբ ծանր հարվածներ են հասցրնում արաբներին:

Վրացիներն ու հայերը ազատագրական համատեղ պայքար են մղել Բյուզանդիայի ու սելջուկների դեմ: Նշանա-

կալից փաստ է, որ վրաց Դավիթ Շինարար թագավորը հովանավորում ու պաշտպանում էր, սելջուկյան արշավանքների հետևանքով, Հայաստանից Վրաստան փախած հայերին: XII դարի հեղինակ Մատթևոս Ուռհայեցին պատմում է, որ Դավիթ Շինարարը քաջ, հզոր և առաքինի մարդ էր: «Սա եղավ հայոց ազգին ընդունող և սիրող, ասում է նա: Սրա մոտ հավաքվեցին հայոց զորքերի մնացորդները և վրաց աշխարհում հայերի համար քաղաք շինեց, կառուցեց եկեղեցիներ ու բազմաթիվ վանքեր, քաղաքն էլ կոչեց Գոռա (Գորի) և հայոց ամբողջ ազգը մեծ ուրախության ու ցնծության մեջ էր»: Դիմելով Դավիթ Շինարարին, Ուռհայեցին ասում է. «Արժե քեզ համար աղոթել նույնիսկ, ոչ միայն շնորհակալ լինել»:

XII—XIII դարերում վրացական ու հայկական ղինված ուժերը մի շարք հաջող կռիվներ են մղում սելջուկ-թուրքերի դեմ: Նրանք ազատագրում են Անին, Շիրակը, Լոռին, Գանձակը, Սյունիքը, Դվինը և այլ վայրեր:

Ուշագրավ է, որ սելջուկների դեմ մղվող կռիվները Վրաստանում և Հայաստանում գլխավորում էր Ռոստով-Սուզդալի իշխան Անդրեյ Բոգոլյուբսկու որդի Յուրի Բոգոլյուբսկին, որը Ռուսաստանից եկել էր Վրաստան և ամուսնացել Թամարա թագուհու հետ:

Համատեղ պայքարի շնորհիվ հայերին և վրացիներին հաջողվում է աչքի ընկնող հաղթանակներ տանել սելջուկ-թուրքերի դեմ և վերականգնել վրացական ու հայկական անկախ իշխանությունները:

XIII դարի սկզբներին Հայաստանն ու Վրաստանը դեռ նոր էին ազատագրվել սելջուկների լծից, երբ սկսվեցին մոնղոլական ավերիչ արշավանքները:

Մոնղոլները, ժամանակակից պատմիչ Կիրակոս Գանձակեցու խոսքերով ասած, մորեխի նման ծակծկում են Հայաստանի դաշտերն ու լեռները: Անդրկովկասի ժողովուրդները մի շարք տեղերում փորձում են կասեցնել մոնղոլների արշավանքը, բայց հաջողություն չեն ունենում: Մոնղոլները նվաճում են Անդրկովկասը և անխնա կոտորում ու կողոպտում տեղի ժողովուրդներին: Այդպես նրանք կողոպտում ու ավե-

րում են Գանձակը, Թբիլիսին, Լոռին, Անին, Կարսը, Կարինը  
և ուրիշ շատ վայրեր:

XIII դարի կեսերին հայերն ու վրացիները փորձում են  
ապստամբություն բարձրացնել և թոթափել մոնղոլական լու-  
ծը. մի քանի տեղերում նույնիսկ զինված ելույթներ են տեղի  
ունենում, բայց դրանք ճնշվում են, իսկ ղեկավարները դաժան  
կերպով պատժվում:

Մերձավոր Արևելքում XV դարում հանդես է գալիս մի նոր  
ագրեսիվ ուժ՝ օսմանյան Թուրքիան: 1453 թվականին թուրքե-  
լը զրավում են Կոստանդնուպոլիսը, հրի ու սրի միջոցով ըն-  
դարձակում իրենց տերիտորիան, նվաճում Հայաստանի ու  
Վրաստանի մի մասը:

XV դարից սկիզբ են առնում թուրք-պարսկական պատե-  
րազմները, որոնք որոշ ընդհատումներով շարունակվում են  
մինչև XVIII դարը: Հայաստանն ու Վրաստանը երկարատև ու  
ավերիչ այդ պատերազմների հետևանքով շտեմնված քայքայ-  
ման ու ավերածության են ենթարկվում: Անդրկովկասի համար  
թուրքերի ու պարսիկների միջև մղված պատերազմների ըն-  
թացքում Հայաստանի և Վրաստանի գյուղերն ու քաղաքները  
մերթ ընկնում էին թուրքական, մերթ պարսկական զորքերի  
ձեռքը և ամեն անգամ հրի ու սրի ճարակ դառնում:

1639 թվականին Թուրքիայի ու Պարսկաստանի (Իրանի)  
միջև կնքված հաշտության պայմանագրի համաձայն, Արևել-  
յան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը զավթում է Պարս-  
կաստանը, իսկ Արևմտյան Հայաստանն ու Արևմտյան Վրաս-  
տանը՝ Թուրքիան:

Հայ և վրաց ժողովուրդների համար սկսվում է չափազանց  
ծանր ու մոռյալ մի ժամանակաշրջան՝ պարսիկ խաների ու  
թուրք փաշաների բարբարոսական ճնշումների ու հալածանք-  
ների ժամանակաշրջանը: Սակայն, այդօրինակ ծանր ու զրժ-  
վարին ժամանակներում իսկ, ազատասեր ժողովուրդները չեն  
կորցնում իրենց հույսն ու հավատը: Նրանք առանձին-առան-  
ձին և միասին ելք են փնտրում, ուղիներ որոնում իրենց ա-  
զատագրության համար:

XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին հայերն ու

վրացիները քաղաքական սերտ կապեր են հաստատում հյու-  
սիսի մեծ տերության՝ Ռուսաստանի հետ: Այդ շրջանից սկսած  
Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը  
թևակոխում է իր զարգացման նոր փուլը: Անդրկովկասի ազա-  
տագրումը թուրք-պարսկական լծից մեկընդմիջտ կապվում է  
Ռուսաստանի օգնության հետ:

XVII—XVIII դարերը հայ և վրաց ժողովուրդների ազա-  
տագրական պայքարի դարեր են: Միատեսակ պայմանները,  
պատմական բախտի ընդհանրությունները, թուրքական և  
պարսկական ասիմիլյատորներին կուլ գնալու վտանգը է՛լ  
ավելի են համախմբում հայերին ու վրացիներին, նրանց միջև  
փաստորեն ստեղծվում է ռազմա-ֆաղաֆական դաշինք,  
միասնական նախաձեռնություններ: Թուրք-պարսկական լուծը թոթափելու  
համար: Այդ շրջանում են ծնունդ առնում Ռուսաստանի օգնու-  
թյամբ Վրաստանի և Հայաստանի ազատագրության հոյակապ  
ծրագրերը, հայ-վրացական ռազմական ուժերի միավորման,  
արտաքին թշնամաների դեմ համատեղ պայքարելու խիզախ  
նախագծերը:

Հայ ազատագրական շարժման մեծ ռահվիրա Իսրայել  
Օրին (մահացել է 1711 թ.) Պետրոս I-ի հետ 1701 թվականին  
Մոսկվայում վարած բանակցությունների ժամանակ, առաջ էր  
քաշում ոչ միայն Հայաստանի, այլև եղբայրական Վրաստանի  
ու Ադրբեջանի ազատագրության հարցը: Օրին Մոսկվայում  
մոտիկ կապեր էր հաստատել վրացական թաղավոր Արշիլի  
հետ, նրանք փոխադարձաբար օգնում ու օժանդակում էին  
միմյանց:

Հայ-վրացական ազատագրական միացյալ պայքարի ջերմ  
պաշտպաններ էին նաև Վրաստանի Վախթանգ թագավորը,  
Գավիթ-Բեկը, Եսայի Հասան-Ջալալյանը, Հերակլ II-ը, Հով-  
սեփի էմիրը, Լազարյանները, Շահամիրյանը և ուրիշներ:

Չի կանելի առանց հուզմունքի նշել հիշարժան այն իրա-  
դարձությունները, որոնք տեղի են ունեցել XVIII դարի սկզբը-  
ներին Վրաստանում և Հայաստանում: Երբ ստացվում է Պետ-  
րոս Մեծի պարսկական արշավանքի լուրը, վրացական և հայ-  
կական զինված ուժերը Վախթանգ VI-ի և Եսայի Հասան-Ջա-

լալյանի գլխավորութեամբ հավաքվում են Սղնախներում: Հայ-վրացական զինված ուժերը մեծ ոգևորութեամբ միավորվում են, իրենց դրոշակների տակ երդվում հավատարիմ լինել միմյանց և միացյալ ուժերով կռվել հայրենիքի ազատութեան համար:

Տակավին Օրու ծրագրով նախատեսված էր, որ երբ ուսական զորքերը մտնեն Անդրկովկասի սահմանները, հայ-վրացական զինված ուժերը պետք է ոտքի կանգնեին, օգնեին ուսական զորքերին և միացյալ ուժերով Անդրկովկասն ազատագրեին պարսկական ու թուրքական լծից: Բայց այդ ծրագիրը չիրագործվեց: Պետրոս I-ի պարսկական արշավանքը հաջողութուն չունեցավ: Նրա անակնկալ մահը մեծ վիշտ առաջ բերեց պատամենների մեջ: Վախթանգ VI-ը հարկադրված, իր ընտանիքով, անցավ Ռուսաստան և Աստրախանում մահացավ 1737 թվականին:

Ղարաբաղում, Սյունիքում, Ղափանում և այլուր հայերը շարունակում են իրենց ազատագրական պայքարը, որը գլխավորում էր Վրաստանից մի խումբ հայ զինվորականների հետ եկած մեծ հայրենասեր և քաջարի զորավար Դավիթ-Քեկը, իսկ նրա մահվանից հետո՝ Մխիթար Սպարապետը: 1720—1730-ական թվականներին հայերը, վրացիներն ու ադրբեջանցիները ձեռք-ձեռքի տված հերոսական կռիվներ են մղում ոչ միայն պարսկական խաների, այլև Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերի դեմ:

XVIII դարի երկրորդ կեսին, Հերակլ II-ի թագավորութեան շրջանում, Վրաստանի քաղաքական դրութիւնը զգալի շափով ամրապնդվում է: Վրաստանի և Հայաստանի ազատագրութեամբ շահագրգռված ուժերը համախմբվում են իր ժամանակի աչքի ընկնող պետական գործիչ և զորավար Հերակլ II-ի շուրջը:

1760-ական թվականներին հայ ազատագրական շարժման ակնավոր գործիչներից մեկը՝ Հովսեփ Էմինը, գնում է Վրաստան, աշխատում Հերակլի պալատում, նրա հետ միասին մշակում հայ-վրացական միացյալ թագավորութիւն ստեղծելու ծրագիրը: 1780-ական թվականներին նման մի ծրագիր էլ

մշակում է հնդկահայ նշանավոր գործիչ Շահամիր Շահամիրյանը:

Վրաց և հայ քաղաքական գործիչները միացյալ թագավորութիւն հիմնելու միջոցով ձգտում էին ուժեղ բուռնցք ստեղծել թուրք-պարսկական զավթիչների դեմ, ազատագրվել նրանց ծանր լծից և ապահովել իրենց երկրների ազատ ու անկախ զարգացումը: Ճիշտ է, այդ ծրագրերը չիրագործվեցին, բայց Հերակլ II-ի թագավորութեան շրջանում տնտեսական, քաղաքական և կուլտուրական սերտ կապեր հաստատվեցին վրացիների և հայերի միջև: Հերակլ II-ը իր տնտեսական, ռազմական, քաղաքական, կուլտուրական ձեռնարկումներին մասնակից էր դարձնում նաև հայերին: Մի որոշ շրջանում նրա պալատում ապրում ու ստեղծագործում էր Անդրկովկասի ժողովուրդների բարեկամութեան կենդանի մարմնացում՝ մեծ երգիչ-բանաստեղծ Սայաթ-Նովան:

1783 թվականին Հյուսիսային Կովկասի Գեորգևսկ ամրոցում Ռուսաստանի և Վրաստանի միջև պայմանագիր է կնքվում, որի համաձայն Վրաստանն անցնում է Ռուսաստանի հովանավորութեան տակ:

Պարսկաստանի Աղա-Մահմեդ խանը, Հերակլ II-ին պատժելու համար, 1795 թվականին 35 հազարանոց բանակով արշավում է Թբիլիսի վրա: Ավերելով Հայաստանի ու Վրաստանի գյուղերն ու քաղաքները՝ պարսկական զորքերը հասնում են Թբիլիսի: Քաղաքի դարպասների մոտ՝ Կրծանիսի դաշտում, վճռական ճակատամարտ է տեղի ունենում: Թշնամին, գերազանց ուժերի շնորհիվ, հաղթում է և ներխուժում քաղաք: Վրացիներն ու հայերը այստեղ ևս հերոսական դիմադրութիւն են ցույց տալիս, ձեռք-ձեռքի տված, միահամուռ ուժերով պաշտպանում իրենց հարազատ քաղաքը: Ականատեսները պատմում են, թե ինչպես հայ մայր Գաբրիելը կրակ էր թափում թշնամու վրա և մինչև վերջ մնաց իր դիրքերում ու քաջաբար զոհվեց:

Ծանր կորուստների գնով պարսիկներին հաջողվում է գրավել Թբիլիսին, ավերի ու կողոպուտի մատնել այն, մասսայա-

բար կոտորել բնակիչներին: Ենթադրվում է, որ այդ ժամանակ էլ հենց զոհվել է Սայաթ-Նովան:

Թբիլիսիի ավերումը մեծ վիշտ ու զայրույթ է առաջ բերում ինչպես վրաց, այնպես էլ հայ ժողովրդի մեջ: Հետագայում վրացիներն ու հայերը միացյալ ուժերով ձեռնամուխ են լինում Թբիլիսիի վերականգնման աշխատանքներին:



XIX դարի սկզբին Անդրկովկասի ժողովուրդները թևակոխում են զարգացման նոր շրջան: 1801 թվականին Վրաստանը միանում է Ռուսաստանին: 1813 թվականին Գյուլիստանի պայմանագրով Ադրբեջանն է անցնում Ռուսաստանի տիրապետության տակ, իսկ 1828 թվականին Թուրքմենչայի պայմանագրով՝ Արևելյան Հայաստանը:

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին պատմական շրջադարձ էր վրացիների, ադրբեջանցիների և հայերի կյանքում. դա պրոգրեսիվ խոշոր նշանակություն ունեցավ: Ռուսաստանի օգնությամբ Անդրկովկասի ժողովուրդները վերջնականապես ազատագրվեցին շահական Պարսկաստանի, մասամբ նաև սուլթանական Թուրքիայի բիրտ ու դաժան լծից, նրանց կու գնալու վտանգից: Անդրկովկասի ժողովուրդները Ռուսաստանին միանալով կանգնեցին զարգացման նոր, համեմատաբար ավելի պրոգրեսիվ ուղիների վրա, հետզհետե ազատագրվեցին ասիական հետամնաց ֆեոդալիզմի կապանքներից և կանգնեցին զարգացման կապիտալիստական ուղու վրա:

Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական կյանքում կատարված այդ փոփոխությունները նոր նախադրյալներ ստեղծեցին նրանց փոխադարձ կապերի հետագա զարգացման համար: XIX դարում, հատկապես նրա երկրորդ կեսին, խոշոր տեղաշարժեր կատարվեցին հայերի, վրացիների ու ադրբեջանցիների տնտեսական, հասարակական, քաղաքական և կուլտուրական կյանքում:

XIX դարի երկրորդ կեսին Անդրկովկասը ֆեոդալական ֆորմացիայից թևակոխեց իր կապիտալիստական զարգացման փուլը: Հիմնվեցին մի շարք ֆաբրիկա-գործարաններ, ստեղծվեցին արդյունաբերական այնպիսի խոշոր կենտրոններ, ինչպիսիք են Բաքուն, Բաթումին, կառուցվեցին երկաթուղիներ և խճուղիներ, զարգացավ առևտուրը, բնդլայնվեցին ներքին փոխանակային կապերը և այլն:

Կապիտալիզմի զարգացման հետևանքով սկսեցին կազմակերպվել բուրժուական ազգերը՝ իրենց գաղափարախոսությամբ, ծրագրերով ու քաղաքական կազմակերպություններով: Նկատելի շափերով զարգացան քաղաքները, կուլտուրան, գիտությունը, գրականությունն ու արվեստը:

Կովկասի վարչական կենտրոն Թիֆլիսը (Թբիլիսին), լինելով եղբայրական Վրաստանի հուշակված մայրաքաղաքը, միաժամանակ մայրաքաղաքի դեր էր կատարում նաև կովկասահայերի համար: 1876 թվականին, պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն, Թբիլիսին ուներ մոտ 66 հազար բնակիչ, որից 32 տոկոսը հայ, իսկ 1897 թվականին՝ 160 հազար բնակիչ, որից 47 տոկոսը հայ: Թբիլիսիի քաղաքաշինության, արհեստների, առևտրի և առհասարակ տնտեսության ու կուլտուրայի բնագավառում հայերը խոշոր դեր էին կատարում:

Հայկական տպագրության, պարբերական մամուլի, գրականության, գիտության ու արվեստի աշխատողների մի ղգալի մասը կենտրոնացած էր Թբիլիսիում: Թբիլիսին կովկասահայերի հասարակական-քաղաքական և կուլտուրական կյանքի ամենախոշոր կենտրոնն էր:

Նման դրություն երբեք չէր կարող գոյություն ունենալ, եթե չլիներ հայ-վրացական անխախտ ու ազնիվ բարեկամությունը, նրանց անշահախնդիր փոխադարձ օգնությունը, եղբայրական վրաց ժողովրդի սիրալիր ու ջերմ վերաբերմունքը:

Բազմազան են ու հարուստ հայ-վրացական բարեկամության վերաբերող փաստերը: Անհնարին է, գուցե և հարկ էլ չկա բոլորը թվարկել: Հիշենք միայն խիստ ուշագրավ և բնորոշ մի քանի օրինակներ:

XIX դարի երկրորդ կեսին ինչպես հայերի, այնպես էլ վրացիների մոտ ազգային-ազատագրական շարժումները լայն ծավալ են ստանում: Վրաց ժողովրդի պայքարը ուղղված էր հիմնականում ցարիզմի դեմ, իսկ հայ ժողովրդի պայքարը՝ ցարիզմի և գերազանցապես սուլթանիզմի դեմ: Չնայած այդ և մի շարք ուրիշ առանձնահատկությունների, հայ-վրացական ազգային-ազատագրական շարժումները, ազատագրական գաղափարներն ու քաղաքական ծրագրերը գտնվում էին փոխադարձ ազդեցություն ու սերտ կապերի մեջ:

1860—1870 և 1880—1890-ական թվականներին Թբիլիսիում և Անդրկովկասի այլ վայրերում գործող հակացարական, ազգային-ազատագրական և նարոդնիկական գաղտնի խմբակներում վրացիներն ու հայերը գործում էին միասնաբար: Ռևոլյուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանը, վրաց ռևոլյուցիոն-դեմոկրատ Գանիել Չոնկաձեն, Ի. Ճավճավաձեն և ուրիշները, Հայաստանի ու Վրաստանի ազատագրությունը չէին կարում միմյանցից: Նրանք Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին միասնական պայքարի կոչ էին անում:

1873 թվականին Ցյուրիխում (Շվեյցարիա) վրացի և հայ ուսանողները Նիկո Նիկոլաձեի նախաձեռնությամբ խմբակ են հիմնում, որի մեջ մտնում էին Ի. Մեսխին, Օ. Գուրամիշվիլին, Պ. Իզմայիլյանը, Գ. Կադակիձեն, Ա. Սմբատյանը, Օլգա Նիկոլաձեն և ուրիշներ: Խմբակի նպատակն էր՝ փոխադարձ օգնություն ցույց տալ կովկասցի ուսանողներին և պրոպագանդել Վրաստանի ու Հայաստանի ազատագրության գաղափարը:

1883 թվականին Թբիլիսիում ժանդարմական օրգանները հայտնաբերում են մի գաղտնի քաղաքական կազմակերպություն, որին մասնակցում էին հայեր, վրացիներ և ռուսներ: Այդ խմբակի աչքի ընկնող անդամներից էին Սիմյոնովը, Քամարա Աղամյանը, Բարսեղ Զավարյանը, Գոգոբերիձեն, Մելիք-Ալավերդյանը և ուրիշներ: Խմբակը հակացարական պրոպագանդա էր մղում սովորող երիտասարդության, բանվորների և բնակչության այլ խավերի մեջ: Իրենց կոչերից մեկում նրանք գրում են.

«Նյդբայրներ, քույրեր, բարեկամներ. ձեզանից ամեն մեկը

պետք է իրեն նպատակ դնի, թեկուզ կյանքի գնով, արագացնել սոցիալական ռևոլյուցիայի ժամանակը՝ անձնական օրինակով, պրոպագանդայով, զինված պայքարի միջոցով: Ուշացնել չի կարելի, մարդկությունը հոգնել է սպասելով, նա տառապում է...»

Փշրենք մեզ բաժանող բոլոր միջնապատերը, պետական-կեղեղեցական, ազգային արգելքներն ու տրագիցիաները: Մեր առջևումն է հաղթանակը, մարդկության ոսկեդարը, պայծառ ու գեղեցիկ ապագան»:

Մարդկության պայծառ ապագայի համար մարտնչող ազատասեր գործիչներին ցարական ժանդարմները նետում են մոլթ ու խոնավ բանտերն ու արսորավայրերը:



XIX դարի վերջում և XX դարի սկզբում Անդրկովկասում հասարակական-քաղաքական կյանքի ասպարեզ է մտնում բանվոր դասակարգը՝ ժողովրդի ամենաառաջավոր և ռևոլյուցիոն ուժը: Անդրկովկասում տարածվում է մարքսիզմը, հիմնրվում են սոցիալ-դեմոկրատական, լենինյան-խակրայական էազմակերպություններ: Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Խարկովում, Կիևում, Օդեսայում, Ռոստովում և այլուր սկսված բանվորական ռևոլյուցիոն շարժումը ոտքի է հանում նաև Անդրկովկասի բանվորներին: XX դարի հենց սկզբից, ինչպես ասված է Լենինյան «Իսկրա»-ում, Անդրկովկասում սկսվում են բացահայտ ռևոլյուցիոն ելույթները ցարիզմի ու բուրժուազիայի դեմ:

Բանվոր դասակարգի ռևոլյուցիոն շարժման, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության շնորհիվ էլ ավելի են ամրապնդվում Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ կապերը: Հատկապես 1905—1907 թթ. ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Անդրկովկասի տարբեր ազ-

դուժյունների բանվորների միջև ուսուցչի ու դաշինք է ստեղծվում ցարիզմի ու բուրժուազիայի դեմ:

Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական կապերը քայքայելու, նրանց մեջ ազգային թշնամանք բորբոքելու նպատակով, ցարական կառավարությունը և տեղական նացիոնալիստները, ինչպես հայտնի է, ստոր պրովոկացիաների էին դիմում, ազգամիջյան կոտորածներ կազմակերպում: Այդպես վարվեցին նրանք 1905 թվականին հայերի ու ազրբեջանցիների նկատմամբ և մեծ վնասներ հասցրին երկու եղբայրական ժողովուրդներին, Անդրկովկասի ուսուցչի ու շարժմանը:

Ցարական կառավարության և տեղական նացիոնալիստների հրահրած ազգային թշնամանքին Անդրկովկասի բուլշևիկները հակադրում էին ժողովուրդների բարեկամության դադափարը: 1905 թվականի փետրվարին հայ-թուրքական կոտորածների առթիվ հրատարակած իր կոչերից մեկում ՌՄԳԹ Թիֆլիսի կոմիտեն գրում է. «Դուք՝ հայեր, թաթարներ, վրացիներ, ուսներ, ձեռք մեկնեցեք միմյանց, ավելի սերտորեն միացեք և ձեզ բաժանելու ուղղությամբ կառավարության փորձերին միահամուռ պատասխանեցեք. կորչի ցարական կառավարությունը, կեցցե ժողովուրդների եղբայրությունը»:

Անդրկովկասի բուլշևիկյան կազմակերպությունները իրենց սկզբնավորման շրջանից հետևողական, անհաշտ պայքար են մղել բուրժուական նացիոնալիզմի դեմ, ժողովուրդների բարեկամության, նրանց ինտերնացիոնալ կապերի ամրապնդման համար: Պատահական չէ, որ Ստ. Շահումյանն ասում էր, թե՛ «նացիոնալիզմը Կովկասում ուսուցչիայի ամենատխերիմ թշնամին է»:

Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության մարտական գորշակալիքները եղել են բուլշևիկները: Իրենց տեսական ու գործնական աշխատանքներով, իրենց կազմակերպական սկզբունքով բուլշևիկները ժողովուրդների բարեկամության, ազգային համերաշխության կենդանի օրինակ են հանդիսացել:

1913 թվականին Մաքսիմ Գորկուն գրած նամակում Վ. Ի. Լենինը բարձր է գնահատում Անդրկովկասի բուլշևիկյան կազ-

մակերպությունների ինտերնացիոնալ սկզբունքը: «Մեզ մոտ և Կովկասում, — գրում է Վ. Ի. Լենինը, — ս. դ. վրացիները-հայերը-թաթարները-ուսները աշխատում են միասին տասր քառուց ավելի միասնական ս. դ. կազմակերպության մեջ. այդ ֆրազ չէ, այլ ազգային հարցի պրոլիտարական լուծում: Միակ ձիշտ լուծումը» (Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 79):


Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության, նրանց ինտերնացիոնալ կապերի ամրապնդման գործում մեծ դեր են կատարել Լենինի հավատարիմ աշակերտներ Ստ. Շահումյանը, Ի. Ստալինը, Մ. Յիսակյան, Ս. Սպանդարյանը, Ա. Զափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Օրջոնիկիձեն, Կիրովը, Մյասնիկյանը, Նարիմանովը և ուրիշներ:



59

Չի կարելի չնշել նաև այն խոշոր դերը, որ հայ-վրացական բարեկամության և նրանց կուլտուրական կապերի ամրապնդման բնագավառում կատարել են երկու ժողովուրդների գրականության, գիտության ու արվեստի առաջավոր ներկայացուցիչները: Նշանավոր գրողներ՝ Խ. Աբովյանը, Գ. Սունդուկյանը, Ա. Մերեթելին, Ի. Ճավճավաձեն, Հ. Թումանյանը, նկարիչներ՝ Գ. Գաբաշվիլին, Ա. Մրեվիշվիլին, Մ. Թոփձեն, Վ. Սուրենյանը, Գ. Բաշինջաղյանը, երաժշտագետներ՝ Կոմիտասը, Կարա-Մուրզան, Ալ. Սպենդիարյանը, Ա. Տիրապետյանը, Մ. Բալանշիվաձեն, Զ. Փալիաշվիլին, Գ. Արախիշվիլին, արտիստներ՝ Վ. Աբաշիձեն, Կ. Կիպիանին, Կ. Մարջանիշվիլին, Ն. Գոցիրիձեն, Պ. Աղամյանը, Գ. Զմիկյանը, Սիրանուշը, Հ. Աբելյանը և շատ ու շատ ուրիշներ եղել են ժողովուրդների բարեկամության ջերմ պաշտպաններ:

Վրաց ժողովրդի մեծ բանաստեղծ Ակակի Մերեթելին «ավագ եղբայր» է անվանել մեր նշանավոր գրամատուրգ Գաբրիել Սունդուկյանին: Գ. Սունդուկյանին նվիրված իր բանաստեղծության մեջ Ա. Մերեթելին գրում է.



Ես մի վրացի, իսկ դու հայ ես մի,  
Բայց մենք կերկուսս էլ եղբայր ենք հիմի,  
Նրկուսս էլ դավակ նույն հողի, ջրի,  
Եվ նույն բնության, և նույն լեռների:

Միություն ու եղբայրություն,  
Ահա թե ինչ եմ տենչացել,  
Ուժն այդ կապի սիրով անհուն  
Ես շատ վաղուց եմ հասկացել:

Խոսելով վրաց և հայ ժողովուրդների հարաբերությունների մասին, Ա. Մերեթելին գրել է. «Պատմությունը վկայում է, որ հայերն ու վրացիները անցյալում առաջ են ընթացել ձեռք-ձեռքի տված: Ահա հենց դա է պատճառը, որ երկու ժողովուրդներն էլ պահպանել են իրենց կյանքը... Ուրեմն թող վրացիներն ու հայերը միասնություն, եղբայրության և սիրո հիման վրա, առաջվա նման ամուր կերպով իրար ձեռք բռնանա՞նք առաջ գնան առաջադիմության ուղիով, հանուն փոխադարձ բարօրության և երջանկության... Թշնամությամբ ոչ մեկս հեռու չենք գնա»:

Վրաստանի մայրաքաղաք Քբիլիսին, որը դարեր շարունակ եղել է հայ-վրացական բարեկամության դարբնոց, միաժամանակ հանդիսացել է նրանց կուլտուրական կապերի օջախ: Այդտեղ են խաչաձևվել եղբայրական երկու ժողովուրդների դարավոր կուլտուրաները, հայի և վրացու շուրթերից այդտեղ են հնչել մեր քաղցրախոս հինավուրց եղբայրական լեզուները, մեր երկու ժողովուրդների ուրախության ու տրևություն անզուգական երգերը:

Շոթա Ռուսթավելու, Սայաթ-Նովայի, Ի. Ծավճավաձեի, Գ. Սունդուկյանի և մեր մյուս ականավոր գրողների ստեղծագործությունները հավասարապես հուզել են ինչպես վրաց, այնպես էլ հայ ժողովրդին: Սայաթ-Նովայի անմահ երգերը հնչել և այսօր էլ հնչում են Անդրկովկասի բոլոր ժողովուրդների լեզուներով: Գ. Սունդուկյանի «Պեպո»-ն եղել է ոչ միայն հայ, այլև վրաց բեմի զարդը: Մեր տաղանդավոր արտիստ Գևորգ Չմշկյանը Քբիլիսիի հայկական և վրացական

թատրոններում Պեպոյի դերը մեծ վարպետությամբ կատարել է ինչպես հայերեն, այնպես էլ վրացերեն լեզուներով:

1903 թվականին Գ. Սունդուկյանի «Խաթաբալա» պիեսը խաղացվում է Քբիլիսիի վրացական թատրոնում: Ներկայացման վերջում բեմ են հրավիրում հեղինակին, որին հանդիսատեսները դիմավորում են շտեմնված ջերմ և բուռն ծափահարություններով: Վրացական թերթերից մեկը, խոսելով այդ մասին, գրում է. «Մեր ազգի ամեն մի բարեկամի սիրտը բերկությունամբ կլցվեր տեսնելով այդ միասիրտ, անկեղծ հափըշտակված շնորհավորական ցույցը: Բոլոր հանդիսականները դիմավորեցին դրամատուրգին՝ կարծես մի մարդ դարձած և, ինչ խոսք, այդ րոպեին, ոչ ոքի մտքով չէր անցել, որ Գաբրիել Սունդուկյանը վրացի չէ»:

Զի կարելի առանց հուզմունքի նշել նաև այն փաստը, որ երբ հայ տաղանդավոր արտիստ Պետրոս Ադամյանը հիվանդանում է, 1891 թվականին վրացական արտիստները հատուկ ներկայացում են տալիս և ստացված դրամը ուղարկում Պ. Ադամյանին:

Հայ և վրացի ժողովուրդների եղբայրության ջերմ պաշտպան ու երկրպագու էր մեր մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը:

Աշխարհում մի մեծ գործ կա, ասում էր Հ. Թումանյանը. դա ժողովուրդների բարեկամությունն է: «Մեզանից ամեն մեկը պետք է սիրի իր հարևանի ազատությունը, — գրում է Թումանյանը, — պարզ գիտակցելով այն ճշմարտությունը, որ մեկի բախտը կապված է մյուսի հետ»: «Էն հայ գործիչը, որը պաշտպան չի կանգնում Վրաստանին, չի հասկացել իր ժողովրդին ու իր պատմությունը, և էն վրացին, որը չի պաշտպանում հայերին ու Հայաստանը, չի հասկացել վրաց ժողովրդին և Վրաստանի պատմական ուղիները»:

«Ես իբրև մի բանաստեղծ մարդ, — ասում է Թումանյանը, — անհուն սեր տածելով առհասարակ ղեպի ժողովուրդները, առանձնապես ուժեղ սիրել եմ մեր եղբայրակից վրաց ժողովուրդը, որի մեջ անց եմ կացրել իմ կյանքի մեծագույն

մասը և որի հետ կապված եմ շատ թանկագին, խոր և ամուր կապերով»:

1917 թվականին Թբիլիսիում նշանավոր պատմաբան Ի. Ջավախաշվիլու գլխավորությամբ մի ընկերություն է կազմվում՝ վրացական համալսարան հիմնելու համար: Հ. Թումանյանը իմանալով այդ մասին, իր սուղ միջոցներից հարյուր ոտրլի է նվիրում համալսարանի ֆոնդին և ողջունչի հետևյալ նամակը հղում ընկերությանը.

«Միայն գիտությունը, գրականությունն ու արվեստն է լրջունում ժողովուրդներին բաժանող անդունդը և միայն դրանք կստեղծեն գալիք լավագույն կյանքն ու ճշմարիտ մարդուն:

Ուստի և դուք կհասկանաք այն ուրախությունը, որ զգացի ես, երբ իմացա վրացական համալսարան բացելու լուրը: Ես հիացմունքով եմ պատկերացնում մայրենի լեզվով բարձրագույն կրթություն ստացող ուրախ և ազնիվ վրացու կյանքը:

Իսկ ե՞րբ մենք պիտի շնորհավորենք Կովկասի մյուս ժողովուրդների բարձրագույն կրթական հաստատությունների բացումը, որպեսզի գիտության և արվեստի հողի վրա իրար հանդիպենք և փոխադարձ ըմբռնում ու հարգանք հաստատենք»:

1917 թ. հոկտեմբերի 25-ին Ընկերության վարչությունը շնորհակալություն հայտնելով Հ. Թումանյանին գրում է.

«Վրաց համալսարանի Ընկերության վարչությունը բարոյական մեծ բավականությամբ ունկնդրեց Ձեր նամակի ընթերցումը վրաց համալսարան հիմնելու առթիվ:

Վրաց ժողովրդի և Վրաստանում ազգային բարձրագույն կրթության նորից ծնվող տնկարանի առթիվ արտահայտած Ձեր համակրանքի զգացմունքները աշխուժ արձագանք գտան Ընկերության վարչության անդամների սրտերում:

Ձեր, որպես իր հայրենիքի լավագույն զավակի ու նրա խոհերի տաղանդավոր արտահայտչի, խորապես սրտաբուխ խոսքերում մենք տեսնում ենք հազարամյակների ընթացքում բարի դրացու նման վրաց ժողովրդի հետ կողք կողքի ապրող և կուլտուրական զարգացման ու հողերը կատարելագործման մշտական ու փոխադարձ հողի վրա գտնվող հայ ժողովրդի քնքշանքն ու ողջունը»:

Վրաց ժողովրդի նկատմամբ իր ջերմ սերը Հ. Թումանյանը արտահայտել է «Նվեր Վրաստանի բանաստեղծներին», «Ն. Բարաթաշվիլու դամբարանի վրա», «Վրաստանին», «Վրաստանի ոգին» և շատ ուրիշ ստեղծագործությունների, հոդվածների, ձևոների ու նամակների մեջ:

1919 թ. ապրիլին «Վրաստանի բանաստեղծներին» ոտանավորի մեջ Հ. Թումանյանը գրել է.

Ձե՛ր, շի լուել մեծ Շ. Պալի  
Երգի ձևեր կաթոգիւ  
Ու դարավոր ցավն ամենհի  
Ձի խորտակել էն հոգին:

Թնդում է դեռ նոր ձեռքերում  
էն քնարը դովանի,  
Խնդում է դեռ նոր երգերում  
Վրաստանը գեղանի:

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն ձեզ հին ու նոր  
Արի, բարի ընկերներ,  
Արարատի կողմից էսօր՝  
Եղբայրական երգ ու սեր:

Հայաստանի և Վրաստանի անխափր բոլոր առաջավոր գրողները, գիտության ու կուլտուրայի նշանավոր գործիչները միշտ էլ շեմօրեն պաշտպանել ու պրոպագանդել են երկու բախտակից ժողովուրդների դարավոր բարեկամության նվիրական գաղափարը:



Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայերի ու վրացիների փոխհարաբերությունները զարգացման ավելի բարձր աստիճանի են հասնում և նոր որակ, նոր բովանդակություն ստանում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիայի հաղթանակից հետո:

Հոկտեմբերյան ռևոլյուցիան մեկընդմիջտ փշրեց ազգային ճնշման շղթաները, որոնք դարեր շարունակ կոել ու կոփել էին շահագործող դասակարգերն ու իմպերիալիստական տերու- թյունները: Կոմունիստական պարտիայի և Սովետական պե- տության մեծ հիմնադիր ու առաջնորդ Վ. Ի. Լենինը հռչակեց բոլոր ժողովուրդների լիակատար ազատության ու իրավա- հավասարության մեծ խարտիան, որը և ընկավ սովետական ժողովուրդների փոխհարաբերությունների հիմքում: Հոկտեմ- բերյան ռևոլյուցիան նոր դարագլուխ բացեց մարդկության պատմության մեջ:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնոր- հիվ ազգային և սոցիալական ազատագրություն ձեռք բերե- ցին նաև Անդրկովկասի ժողովուրդները: 1920—1921 թվա- կաններին Ազրբեջանի, Հայաստանի և Վրաստանի բանվոր- ներն ու գյուղացիները, Սովետական Ռուսաստանի եղբայրա- կան օգնությամբ, տապալեցին մուսավաթականների, դաշ- նակցականների ու մենշևիկների արյունոտ լուծը և սովետա- կան կարգեր հաստատեցին Անդրկովկասում:

Սովետական կարգերի համար մղված պայքարի շրջանում Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները, բուլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ, բարձր պահեցին ժողովուրդ- ների բարեկամության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի պանծալի դրոշմը: Նրանք փոխադարձ մեծ օգնություն ու օժան- դակություն ցույց տվին միմյանց՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թշնամիների դեմ մղված պայքարում: Դաշնակ- ների, մենշևիկների, մուսավաթականների ու նրանց իմպե- րիալիստական տերերի դավերը՝ ազգային պառակտում ու թշնամանք ստեղծելու, ռևոլյուցիոն պայքարը ձախողելու ուղ- դությունները, թեպետև մեծ վնասներ պատճառեցին Անդրկովկա- սի ժողովուրդներին, բայց հաջողություն չունեցան: Հոկտեմ- բերյան ռևոլյուցիայի ալիքները հասան Անդրկովկաս. կոն- սուլերը ռևոլյուցիոն ուժերը նետվեցին պատմության աղբանոցը:

Սովետական կարգերի հաղթանակը տնտեսական, քաղա- բական և կուլտուրական զարգացման լայն հեռանկարներ բա- ցեց Անդրկովկասի ժողովուրդների համար: Կոմունիստական

պարտիայի ղեկավարությամբ բազմազգ Անդրկովկասում ստեղծվեց ազգային համերաշխության այնպիսի մի օրինակ, որը չէր տեսնված և անհնարին էր բուրժուական կարգերում:

Մեծ Լենինի նախաձեռնությամբ, Օրշոնիկիձեի, Կիրովի, Մյասնիկյանի և ուրիշների եռանդուն ջանքերով կազմվեց Ան- դրկովկասյան ֆեդերացիա, որը խոշոր դեր կատարեց ժողո- վուրդների բարեկամության, նրանց տնտեսական, քաղաքա- կան և կուլտուրական կապերի ամրապնդման ու զարգացման գործում:

1921 թ. ապրիլի 14-ին Կովկասի կոմունիստներին ուղար- կած իր նշանավոր նամակում Վ. Ի. Լենինը գրում է. «Ջեր- մագին ողջունելով Կովկասի Սովետական ռեսպուբլիկաները, ես ինձ թույլ եմ տալիս հույս հայտնել, որ նրանց սերտ դա- շինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է լուրժուական հասարակարգում» (Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402):

Անդրկովկասի ժողովուրդները, բուլշևիկների ղեկավարու- թյամբ, պատվով կատարեցին մեծ առաջնորդի պատգամը: Անդրկովկասյան ֆեդերացիայի գոյության 14 տարիների ըն- թացքում և նրանից հետո ընկած ժամանակաշրջանում, միաց- յալ ուժերով վերականգնվեց երկրամասի ծայր աստիճան քայ- քայված ժողովրդական տնտեսությունը, Սովետական Ռուսաս- տանի և մյուս ռեսպուբլիկաների եղբայրական օգնության շնորհիվ Անդրկովկասը երբեմնի հետամնաց ագրարային երկ- րից դարձավ զարգացած արդյունաբերության, առաջավոր գյուղատնտեսության և ծաղկած կուլտուրայի երկիր: Սովե- տական կարգերի և ժողովուրդների սոցիալիստական համա- գործակցության շնորհիվ արմատապես փոխվեց անդրկով- կասյան ռեսպուբլիկաների դեմքը, նրանք բառի բուն իմաս- տով վերածնվեցին:

Անդրկովկասի և ողջ Սովետական Միության ժողովուրդ- ների լենինյան բարեկամությունը իր քննությունը բռնեց 1941—1945 թթ. Հայրենական Մեծ պատերազմի ծանր ու դժվարին տարիներին: Ռազմաճակատում և թիկունքում, մյուս

բոլոր ժողովուրդների զավակների հետ մեկտեղ, հայերը, վրացիներն ու աղբբեջանցիները հերոսաբար մարտնչում էին՝ հանուն հայրենիքի, հանուն հաղթանակի:

1942 թվականի օգոստոսին, երբ գերմանա-ֆաշիստական հորդաները ծեծում էին Անդրկովկասի դռները, Թբիլիսիում գումարված Անդրկովկասի ժողովուրդների հակաֆաշիստական միտինգի մասնակիցները մի մարդու պես երգվեցին՝ մինչև արյան վերջին կաթիլը մարտնչել անարդ թշնամու դեմ, պաշտպանել հայրենի հողերը:

Ահա թե ինչ էին ասում իրենց դիմումի մեջ հակաֆաշիստական միտինգի մասնակիցները. «Չկա այնպիսի ուժ, որը կարողանար միմյանցից բաժանել Անդրկովկասի ժողովուրդներին, նրանց անջատել ուս մեծ ժողովրդից՝ ՍՍԽՄ ժողովուրդների ընտանիքում՝ մեր ավագ եղբորից... Աղբբեջանի, Վրաստանի, Հայաստանի ժողովուրդները երբեք ոչ ոքի չեն տա պատմական այդ մեծ նվաճումները»:

Թշնամին կջարդի իր փտած ժանիքները՝ զարնելով Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների անխորտակելի միասնության պողպատակուռ պարսպին: Մենք անառիկ բնագիծ կղարձենք լեռնային յուրաքանչյուր կածան, յուրաքանչյուր կիրճ, որտեղ թշնամուն ամենուրեք կսպասի անողոր մահը»:

Իրենց նամակի մեջ միտինգի մասնակիցները գրում են. «Մենք հանդիսավոր երգում ենք տալիս, որ էլ ավելի կբարձրացնենք ժողովուրդների մեծ բարեկամության փառապանծ մարտական դրոշը»:

Միտինգում հայրենասիրական կրակոտ ճառ է արտասանում ականավոր գիտնական ակադեմիկոս Հովսեփ Օրբելին: «Իմ հարազատներ, Կովկասի զավակներ, Կարմիր Բանակի մարտիկներ, — ասում է նա, — հիշեցեք, որ ձեր կուրծքը պաշտպանում է հարազատ Կովկասը, պաշտպանում է Բաքուն, Գրոզնին՝ սովետական մարտական տեխնիկայի մեծ ուժի աղբբուրները... Թող թշնամու դեմ ձեր գրոհը իր ճանապարհին ջնջի ու ոչնչացնի ամեն ինչ, ինչպես որ ջնջում ու ոչնչացնում են էլբրուսի, Կադբեկի, Ուժբայի լանջերից հոսող հեղեղները, որոնք շփտան ոչ մի արգելք... Ձեր սրբնթաց գրո-

հը թշնամու դեմ թող լինի հեղեղից էլ արագ, փլվածքից էլ անսպասելի, թող նա հասնի թշնամիների հետևից և ջնջի, հողմացրիվ անի նրանց բոլորին, մինչև վերջինը: Դրանով դուք քայքայումից կպաշտպանեք ձեր օջախը, ստրկութունից կփրկեք ձեզ, ձեր կանանց ու երեխաներին և դա կլինի մեծ վրեժխնդրություն մեր Հայրենիքին պատճառած տառապանքների համար: Դրան է կոչում ձեզ Հայրենիքը»:

Անդրկովկասի ժողովուրդները, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, ջախջախիչ հարվածներ հասցրին գերմանա-ֆաշիստական հորդաներին և դուրս վուրնդեցին Կովկասի սահմաններից: Կովկասի պաշտպանության համար մղված հերոսամարտերում հայերից, վրացիներից և աղբբեջանցիներից շատերը փառքով պսակեցին իրենց անունները՝ քաջություն, արիության, ազատասիրության ու հայրենասիրության օրինակ հանդիսացան: Նրանք հերոսի մահով ընկան Հայրենիքի պաշտպանության դիրքերում և հավերժ անմահացան:



Սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում Անդրկովկասի ժողովուրդները խոշոր նվաճումներ ձեռք բերեցին նաև ետպատերազմյան շրջանում: Արագ կերպով բուժելով պատերազմի ծանր վերքերը, սովետական ժողովուրդը վիթխարի առաջընթաց կատարեց սոցիալիզմից կոմունիզմին անցման ճանապարհին: Կոմունիստական պարտիայի և Սովետական պետության իմաստուն քաղաքականությունը՝ մեր Հայրենիքի տնտեսության ու կուլտուրայի զարգացման վերաբերյալ, պսակվեց փայլուն հաղթանակներով: Մենք թևակոխեցինք կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանը:

Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները, որպես Սովետական մեծ Միության ընտանիքի իրավահավասար անդամներ, համընթաց քայլում են կոմունիզմի ճանապարհով, իրենց լուծման մուծում կոմունիզմի կառուցման գործում:

Քառասուն տարի է անցել Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակից հետո: Հազարամյակների պատմութուն ունեցող մեր ժողովուրդների համար քառասուն տարին մի ակնթարթ է: Բայց մի՞թե տարիներն են որոշողը և կամ տարիներով պետք է չափել ժողովուրդների գործերը: Տարիներ կան, երբ ժողովուրդը իրագործում է իր դարերի երազը: Ինչ խոսք, այդպիսի տարիները դարեր արժեն:

Սովետական իշխանության քառասուն տարիների ընթացքում Անդրկովկասի աշխատավոր և տաղանդավոր ժողովուրդները քառասուն դարի ճանապարհ են կտրել: Մենք այսօր օրինական հպարտությամբ ենք նշում, որ տնտեսության, գիտության ու տեխնիկայի, կուլտուրայի և մյուս բնագավառներում շատ ու շատ առաջ ենք անցել մեր հարևան երկրներից՝ Իրանից ու Թուրքիայից, որոնք դարեր շարունակ մեզ ճնշում ու կողոպտում էին և նույնիսկ երազում աշխարհագրական քարտեզից ջնջել մեր երկրների անունները: Մենք հպարտանում ենք, որ Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները տնտեսության առանձին ճյուղերում առաջ են անցել անգամ մի շարք զարգացած կապիտալիստական երկրներից, որոնցից մինչև սովետական կարգերի հաստատումը դարերով ետ էին մնացել:

Մեր տնտեսական, ֆաղափական և կուլտուրական վիթխարի նվաճումների համար մենք պարտական ենք սովետական կարգերին, Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային ֆաղափականությանը, սովետական ժողովուրդների անշահախնդիր բարեկամությանը:

Պատմության դասերը, պատմական փորձը ուսանելի են բոլոր ժամանակներում, բոլոր ժողովուրդների համար:

Հայ և վրաց ժողովուրդների դարավոր մաքառումները օտարերկրյա նվաճողների դեմ, նրանց համատեղ պայքարը սովետական կարգերի հաղթանակի, իրենց ազգային և սոցիալական ազատագրության համար, նրանց ստեղծագործ ուժերի միավորումը կոմունիզմի կառուցման մեծ գործում, այս ամենը վերին աստիճանի ուսանելի են ոչ միայն մեր ժողովուրդների, այլև ուրիշ շատ ժողովուրդների համար:

Ներկայումս ավելի քան երբևէ ամուր են ու անխախտ հայվրացական եղբայրական կապերը: Դրանք խարսխված են փոխադարձ օգնություն, եղբայրական սիրտ ու հարգանքի վրա: Ոչ մի ժամանակ այնքան սերտ ու բազմակողմանի չեն դրսևորվել հայ և վրաց ժողովուրդների տնտեսական, ֆաղափական և կուլտուրական կապերը, որքան այժմ՝ կոմունիզմի ծավալում կառուցման ժամանակաշրջանում:

Վրաստանի ժողտնտխորհին ենթակա արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ սոցիալիստական մրցության մեջ են գտնվում Հայաստանի ժողտնտխորհին ենթակա ձեռնարկությունների հետ: Թբիլիսիի, Երևանի, Լենինականի, Քուլթայիսիի, Ռուսթավիի, Կիրովականի և մյուս արդյունաբերական կենտրոնների բանվոր-ծառայողները հաճախակի հանդիպումներ են ունենում, փորձի փոխանակում կատարում և օգնում միմյանց:

Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի կոլեկտիվը սոցիալիստական մրցության մեջ է գտնվում Թբիլիսիի Կիրովի անվան հաստոցաշինական գործարանի կոլեկտիվի հետ: Աշխատանքային և բարեկամական ամենազերմ հարաբերություններ գոյություն ունեն այդ երկու կոլեկտիվների միջև:

Մոտ քառորդ դար է, ինչ սոցիալիստական մրցության մեջ են գտնվում Մախարաձեի շրջանի Նաթանների և Հոկտեմբերյանի շրջանի Նալբանդյան գյուղերի կոլտնտեսությունները: «Շատ ու շատ անգամ ենք մենք միմյանց մոտ եղել, — ասում է Նալբանդյան գյուղի կոլտնտեսության պարտիական կազմակերպության բյուրոյի քարտուղարը, — բայց անգամ էլ չեմ ու սրտագին են եղել մեր հանդիպումները, որոնք վերածվել են հայ և վրաց ժողովուրդների բարեկամության վառ ցույցի»:

Հայկական ՍՍՌ Արթիկի շրջանը տարիներ շարունակ սոցիալիստական մրցության մեջ է գտնվում վրացական ՍՍՌ Ախալբալակի շրջանի հետ: 1960 թ. նոյեմբերի 29-ին նրանց միացյալ ուժերով Արթիկում կանգնեցվում են Շոթա Ռուսթա-

վիճու և ևսաշատուր Աբովյանի արձանները, որպես երկու ժողովուրդների բարեկամութեան սիմվոլ:

Հրաշալի տրագիդիա են ստեղծել գիտութեան, գրականութեան և արվեստի աշխատողները: Վրացական և հայկական Գիտութեանների ակադեմիաները, համալսարաններն ու ինստիտուտները սիստեմատիկաբար միացյալ գիտական սեսիաներ են հրավիրում, համատեղ քննարկում ընդհանուր հարցերը, միմյանց ծանոթացնում գիտական մտքի նվաճումներին, փորձի փոխանակում կազմակերպում, գիտական աշխատանքները կոորդինացնում և այլն:

1960 թ. հոկտեմբերին միութենական, հայկական, վրացական և ադրբեջանական Գիտութեանների ակադեմիաների նրևանում տեղի ունեցած գիտական միացյալ սեսիայում վրացական Գիտութեանների ակադեմիայի պրեզիդենտ, ականավոր մաթեմատիկոս Ն. Ի. Մուսխելիշվիլին իր ողջույնի խոսքում ասաց. «Մեզ՝ վրացական գիտնականներին, անկեղծորեն ուրախացնում են մեր հայ կոլեգաների հաջողութեանները, որոնցով մենք, ձեր մոտիկ զրացիներն ու եղբայրները, ձեզ հետ միասին հպարտանում ենք»:

Հայկական ՍՍՌ Գիտութեանների ակադեմիայի պրեզիդենտ, ականավոր աստրոֆիզիկ Վ. Համբարձումյանը, խոսելով հայ և վրաց գիտնականների կապերի մասին, ասում է. «Գոհունակութեամբ կարելի է նշել, որ տարեցտարի ընդլայնվում է համագործակցությունը հայ և վրաց գիտնականների միջև: Մեծ բարեկամության մեջ են գիտնական-աստղաբաշխները՝ Բյուրականի և Աբասթումանի աստղադիտարանների աշխատակիցները: Նրանց համատեղ գիտական աշխատանքը հիանալի արդյունքներ է տալիս: Համաշխարհային հոշակ վայելող այնպիսի խոշոր գիտնական, ինչպիսին Ն. Ի. Մուսխելիշվիլին է, գործնական մեծ օգնություն է ցույց տալիս Հայկական ՍՍՌ գիտնականներին»:

Հայ և վրաց գրականության լավագույն երկերի թարգմանությունները, երաժշտության, թատրոնի, նկարչության բնագավառներում ստեղծված սերտ կապերը, Անդրկովկասի թատերական գարունը, երգ ու պարի, գործիքային նվագախմբի

և ստեղծագործական մյուս կուլեկտիվների փոխադարձ այցելությունները ավելի ու ավելի են մոտեցնում մեր ժողովուրդներին, ամրապնդում նրանց հոգևոր, կուլտուրական կապերը:

Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստ Մ. Կվարեշվիլին գրում է. «Դախի» օպերայում իմ դերուտը կապված է հայտնի երգչուհի, ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Հայկանուշ Դանիելյանի հետ, որը միատեսակ սիրով էր երգում ինչպես հայ կոմպոզիտորների, այնպես էլ Զ. Փալիաշվիլու, Գ. Արակիշվիլու, Ա. Բալանշիվաձեի, Վ. Դոլիձեի օպերաներում... Նա խոր հետքեր է թողել վրացական օպերայի արվեստում:

Ես եղբայրական սեր եմ տածում երջանիկ հայ ժողովրդի նկատմամբ: Թող անսպառ լինի վրաց և հայ ժողովուրդների բարեկամութեան աղբյուրը, թող այդ երկու ժողովուրդներն ու նրանց կապերը այսուհետև ևս ամրապնդվեն»:

Հայ-վրացական եղբայրության վառ արտահայտություններից է վրաց տաղանդավոր բանաստեղծ Իոսեք Նոնեշվիլու «Օջախ, դռոշ, նշմարտություն» հիանալի բանաստեղծությունը:

Օջախ և դռոշ և ճշմարտություն՝  
Չեն թարգմանվում այս բառերը մեզ մոտ,  
Մանկուց են ծանոթ նրանք վրացուն,  
եվ հային նույնպես մանկուց են ծանոթ...

Երեք սրբազան բառերը այս հին  
Մեր միասնության զրահն են կոել  
եվ միասնության այդ կուտ զրահին  
Ոստիներն իրենց թրերն են վրել

Հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը ուսանելի շատ բան է պարունակում իր մեջ և կարող է լավագույն օրինակը ծառայել բոլոր ժողովուրդների համար:

Թո՛ղ մեր սեզ սարերի պես միշտ կանգուն, մեր պարզ ու չինջ երկնքի պես միշտ մաքուր ու հստակ մնա այդ բարեկամությունը:

Սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում թող է՛լ ավելի ծաղկի ու բարգավաճի աշխատասեր ու տաղանդավոր վրաց ժողովուրդը, մեր գեղեցիկ, մեր շքնաղ Սաքարթվիլուն:



Խմբագիր՝ Ա. Բ. Հարությունյան  
Անվագ որբագրիչ՝ Շ. Գեմիրճյան

ՎՑ 01944

Պատվեր 777

Տիրաժ 1500

---

Հանձնված է արտադրության 10/I 1962 թ.,  
Ստորագրված է տպագրության 8/II 1962 թ.,  
Քուղթ՝ 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>, Տպագր. 2 մամ.  
Գինը 10 կոպ.

---

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության Հրատարակչությունների  
և պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության  
№ 6 տպարան, Երևան, Թումանյանի փողոց № 51ա